# «Ֆասթ Բանկ» ՓԲԸ

## Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

*2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*
*Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

# Բովանդակություն

## Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

## Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն ........ 1
Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն........ 3
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն........ 4

## Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ծանոթագրություն 1........ 5

Կառուցելով բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705

# Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

### *Կարծիք*

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, 2022թ. դեկտեմբերի 31- ն ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ամբողջական ֆինանսական հաշվետվությունից:

Մեր կարծիքով, կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով համահունչ է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությանը` Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

### *Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ*

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

### *Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը*

Մենք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2023թ. մայիսի 31-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք: Այդ եզրակացությունը ներառում է նաև տեղեկատվություն աուդիտի առանցքային հարցերի վերաբերյալ:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

***Այլ հանգամանք***

Բանկի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ամփոփ ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի հունիսի 17-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

***Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը***

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար` Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

***Աուդիտորի պատասխանատվությունը***

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* (վերանայված) աուդիտի միջազգային ստանդարտ 810-ին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր` Էրիկ Հայրապետյան

Պատասխանատու աուդիտոր` Ելենա Ադամյան

31 մայիսի, 2023թ

## Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

*(հազար ՀՀ դրամ)*

| | 2022թ. | 2021թ. (վերադասա-կարգված) |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 3,180,144 | 2,412,544 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 110,319 | – |
| Ներդրումային արժեթղթեր | 4,551,296 | 5,116,897 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 56,410,990 | 52,318,930 |
| Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 2,690,069 | 1,687,181 |
| Ոչ նյութական ակտիվներ | 613,470 | 31,534 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | – | 101,452 |
| Այլ ակտիվներ | 815,423 | 419,003 |
| **Ընդամենը ակտիվներ** | **68,371,711** | **62,087,541** |
| **Պարտավորություններ** | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 2,549 | – |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 582,925 | – |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 7,765,422 | 7,301,491 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 1,451,539 | 413,487 |
| Այլ փոխառու միջոցներ | 3,333,190 | 27,623,994 |
| Պարտավորություններ վարձակալության գծով | 1,787,052 | 1,344,542 |
| Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով | 1,504,320 | – |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 2,260,052 | 2,678,897 |
| Այլ պարտավորություններ | 950,983 | 546,387 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **19,638,032** | **39,908,798** |
| **Սեփական կապիտալ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 30,100,000 | 7,000,000 |
| Չբաշխված շահույթ | 19,437,015 | 15,530,279 |
| Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | (803,336) | (351,536) |
| **Ընդամենը կապիտալ** | **48,733,679** | **22,178,743** |
| **Ընդամենը պարտավորություններ և կապիտալ** | **68,371,711** | **62,087,541** |

Ստորագրվել և վավերացվել է Բանկի տնօրինության կողմից:

Գարեգին Դարբինյան — Գործադիր տնօրենի Ժ/Պ

Թաթուլ Թամրազյան — Գլխավոր հաշվապահ

31 մայիսի 2023թ.

*Կից ծանոթագրությունը կազմում է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *2022թ.* | *2021թ. (վերադասա-կարգված)* |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 13,458,719 | 13,270,027 |
| Տոկոսային ծախս | (2,421,795) | (2,938,079) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **11,036,924** | **10,331,948** |
| Վարկային կորուստների գծով ծախս | (663,007) | (2,473,015) |
| **Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո** | **10,373,917** | **7,858,933** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 26,155 | 10,775 |
| Միջնորդավճարների գծով ծախս | (156,641) | (17,113) |
| Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | (1,200) | (7,888) |
| *Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից՝* | 1,657,826 | 1,125,936 |
| - Առք ու վաճառքի գործարքներից | 986,780 | 767,868 |
| - Արտարժույթի վերագնահատումից | 671,046 | 358,068 |
| Այլ եկամուտ | 45,855 | 99,095 |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | **1,571,995** | **1,210,805** |
| Անձնակազմի գծով ծախսեր | (3,393,873) | (2,445,764) |
| Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ | (417,348) | (297,308) |
| Այլ գործառնական ծախսեր | (1,010,906) | (514,280) |
| **Ոչ տոկոսային ծախսեր** | **(4,822,127)** | **(3,257,352)** |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | **7,123,785** | **5,812,386** |
| Շահութահարկի գծով ծախս | (1,217,049) | (1,012,231) |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **5,906,736** | **4,800,155** |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝* | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն | (537,448) | (377,404) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ | (13,527) | 47,015 |
| Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով | 99,175 | 59,470 |
| **Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ վնաս** | **(451,800)** | **(270,919)** |
| **Տարվա այլ համապարփակ վնաս հարկումից հետո** | **(451,800)** | **(270,919)** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական եկամուտ** | **5,454,936** | **4,529,236** |

*Կից ծանոթագրությունը կազմում է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Բաժնետիրական կապիտալ* | *Ներդրումային արժեթղթերի վերագնա-հատման պահուստ* | *Չբաշխված շահույթ* | *Ընդամենը կապիտալ* |
|---|---|---|---|---|
| **Մնացորդն առ 2021թ. հունվարի 1** | **7,000,000** | **(80,617)** | **10,730,124** | **17,649,507** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | |
| Հաշվետու տարվա շահույթ | – | – | 4,800,155 | **4,800,155** |
| Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս | – | (270,919) | – | **(270,919)** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | **–** | **(270,919)** | **4,800,155** | **4,529,236** |
| **Մնացորդն առ 2021թ. դեկտեմբերի 31** | **7,000,000** | **(351,536)** | **15,530,279** | **22,178,743** |
| Հաշվետու տարվա շահույթ | – | – | 5,906,736 | **5,906,736** |
| Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս | – | (451,800) | – | **(451,800)** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | **–** | **(451,800)** | **5,906,736** | **5,454,936** |
| Պարտավորության փոխարկում սեփական կապիտալի | 21,200,000 | – | – | **21,200,000** |
| Շահաբաժնի կապիտալացում | 1,900,000 | – | (1,900,000) | **–** |
| Բանկի բաժնետերերին վճարված շահաբաժին | – | – | (100,000) | **(100,000)** |
| **Մնացորդն առ 2022թ. դեկտեմբերի 31** | **30,100,000** | **(803,336)** | **19,437,015** | **48,733,679** |

*Կից ծանոթագրությունը կազմում է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *2022* | *2021 (վերադասա-կարգված)* |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Շահույթ նախքան շահութահարկով հարկումը | 7,123,785 | 5,812,386 |
| ***Ճշգրտումներ՝*** | | |
| Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ | 417,348 | 297,308 |
| Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների օտարումից օգուտ | (3,226) | – |
| Վարկային կորուստների գծով ծախս | 663,007 | 2,473,015 |
| Արտարժույթի վերագնահատումից օգուտ | (671,046) | (358,068) |
| Տոկոսային եկամուտ | (13,458,719) | (13,270,027) |
| Տոկոսային ծախս | 2,421,795 | 2,938,079 |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը** | **(3,507,056)** | **(2,107,307)** |
| ***Գործառնական ակտիվների (աճ)/նվազում*** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | (5,927,564) | (7,606,393) |
| Այլ ակտիվներ | (387,155) | (204,022) |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | (118,781) | – |
| ***Գործառնական պարտավորությունների աճ/նվազեցում*** | | |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | – | (5,275,501) |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 581,847 | – |
| Այլ պարտավորություններ | 612,027 | (63,792) |
| **Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը** | **(8,746,682)** | **(15,257,015)** |
| Ստացված տոկոսներ | 13,306,740 | 13,050,495 |
| Վճարված տոկոսներ | (2,626,124) | (2,723,870) |
| Վճարված շահութահարկ | (34,635) | (271,493) |
| **Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր** | **1,899,299** | **(5,201,883)** |
| | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (742,949) | – |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (619,703) | (165,788) |
| **Ներդրումային գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր** | **(1,362,652)** | **(165,788)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Բանկերից ստացված մուտքեր | 42,008,865 | 23,326,124 |
| Վարկերի մարում բանկերին | (39,424,030) | (18,366,598) |
| Թողարկված պարտատոմսերից մուտքեր | 1,119,158 | – |
| Այլ փոխառու միջոցներից մուտքեր | 28,315,722 | 43,080,097 |
| Այլ փոխառու միջոցների մարում | (30,772,415) | (41,611,081) |
| Վարձակալության գծով պարտավորությունների մարում | (193,785) | (125,284) |
| Բանկի բաժնետերերին վճարված շահաբաժիններ | (100,000) | – |
| | | |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր** | **953,515** | **6,303,258** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (722,837) | (130,152) |
| Ակնկալվող վարկային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 275 | (1,394) |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | **767,600** | **804,041** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում | 2,412,544 | 1,608,503 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում** | **3,180,144** | **2,412,544** |

*Կից ծանոթագրությունը կազմում է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

*(հազար ՀՀ դրամ)*

## Ծանոթագրություն 1

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են Բանկի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկությունները, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի հետ կարելի է ծանոթանալ «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրոնային կայքում: